Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐԿՈՒ ՊԱՇԼԱՓԱՅ

891.99
Գ-19.

75 29/XI/37

891.99
F-19
01 JAN 2009
08 DEC 2011
№ 9194.
27 FEB 2013

Հրատարակութիւն ԼԵՒՈՆ ՍԱՐԻԲԵԿՈՎԻ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ՊԱՀԼԱՒԱՆ

(Սասունի հիմնադիրները)

1001/11947

ԴԻՑԱԶՆԵՐԳԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՊՕԷՄ

«ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐԻ ՑՈՒՇԻԿՆԵՐԻՑ»

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ «ԼՈՒՄԱՅ» ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻՑ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
1922
Ա. ՄՅԱՍՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ
ТИФЛИСКАГО СОБРАНІЯ
БИБЛІОТЕКА

ԹԻՖԼԻՍ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մաղաք. փող., 15.
(65)

4 APR 2014
23138

Дозволено цензурою, 19 Августа 1904 года. г. Тифлисъ.

ԵՐԿՈՒ ՊԱՀԼԱՒԱՆ

(Սասունի հիմնադիրները)

I.

Մեր հին Հայկական պատմութիւններում
Գրուած է, թէ վաղ ժամանակներում
Կռապաշտական ունէր գոյութիւն
Ասորեստանի թագաւորութիւն։
Քրիստոսից առաջ տարիներ հազար
Քաջ, տիրապետող այդ ազգի համար
Մի մեծ թագաւոր կար Սենեքերիմ,
Հոգով բռնակալ, չար և ոխերիմ։
Թշնամի դարձած հայերին *) կատէր,
Ինքը կռապաշտ, Աստուած չըգիտէր.
Միակ նպատակը—չարի ճանապարհ,
Անգութ արարքով լցրել էր աշխարհ։
Եւ քանի անգամ ժողովեց զօրքեր,
Հայի աչքերից ցօղեց արցունքներ.
Հին Հայաստանը դողում էր ահից
Ու փախչում մարդիկ վերահաս մահից։
Մի անգամ ևս մտաւ Հայաստան,

*) Սենեքերիմի ժամանակ հայերը դեռ քրիստոնեայ չէին։

Պարզեց օդի մէջ դրօշ յաղթութեան
Եւ վերադարձաւ անթիւ աւարով,
Շղթայած անմեղ շատ գերիներով.
Գերիների մէջ կար մէկ հայ աղջիկ,
Մազերով երկայն, դէմքով գեղեցիկ.
Սենեքերիմը երբ նրան տեսաւ՝
Հաւանեց իսկոյն և ամուսնացաւ.
Ապա ունեցաւ երկու զաւակներ,
Երկուսն էլ տղայ, կորիճ ոյժի տէր,
Մէկն Ասլի-Մէլիք, միւսը Սանասար.
Բայց Սենեքերիմ՝ կեանքին հաւասար՝
Սիրում էր միայն կանգնեցրած կուռքեր,
Որոնց բերում էր կենդանի զոհեր,
Եւ ծնրադրած երկրպագում էր
Նրանց առաջև և աղօթում էր,
Ե՛ւ հաւատում էր նրանց մշտական
Զօրութիւններին երևակայական...

II.

Մի անգամ նորից զօրքով արշաւեց
Եւ Հայաստանում գիւղեր աւերեց.
Բայց այս անգամին մէկ հոգի, մարմին
Դառած հայերը Սենեքերիմին
Նեղը լծեցին. յուսահատ արքան
Դիմեց իր պաշտած կուռքի զօրութեան

Եւ բացականչեց. «Ո՞վ կուռք զօրաւոր,
Ազատիր տեղից այս վտանգաւոր,
Եւ երբ ողջ դառնամ՝ խոստանում եմ քեզ
Իմ երկու տղայք անել սղջակէզ...»

III.

Կինը անհանգիստ մարդուն կըյիշէր,
Վատ երազ տեսաւ յանկարծ մի գիշեր,
Որպէս թէ երկու փայլուն ճրագներ
Զոկ-Զոկ ձեռքերին նա բռնած ունէր.
Մերթ վառվում էին լոյսերով պայծառ,
Մերթ հանգչել ուզում ու կիսախաւար...
Առաւօտը վաղ քնից զարթելով
Մայրը վշտալից միտը բերելով
Եղելութիւնը տեսած երազի՝
Պատմեց տղերանց «թէ ձեր մուրազի
Կարօտին հասնել կ՚ուզէք անփորձանք,
Աշխատեցէք շուտ ազատել ձեր կեանք...
Երկու ճրագներ տեսայ երազում,
Մերթ վառվում էին, մերթ հանգչել ուզում.
Երևաց և ինձ մի սուրբ ալևոր,
Յայտնեց՝ ձեր հայրը կռվում հեռաւոր
Զօրքով պաշարուած շատ նեղացած է,
Կուռքին զոհելու ձեզ խոստացած է,
Երբ վերադառնայ—ձեզ մատաղ կանի,

Ո՞վ անգութ հօրից ձեզ կըպաշտպանի,
Արդէն սրտի մէջ մտել է չարը,
Գնացէք, գտէք ձեր դլխի ճարը...»

IV.

Խեղճ տղաները, հօրից վախեցած,
Հացի պաշարով պարկը շալակած,
Ճանապարհ ընկան Աստուած կանչելով,
Իրենց սև օրուայ բաղդն անիծելով։
Շատ պտտեցին, շատ երկիր տեսան,
Մինչև մի նեղ ձոր *) վերջապէս հասան.
Այդ ձորի միջով վազում էր մի գետ **)
Եւ բարակ առու դալիս նրա հետ
Խառնվում միւս կողմից և շերտում ոյժով
Մինչև մէջ տեղը բարձր աղմուկով։
Այս բանի վրայ շատ զարմանալով
Կանչեց Սանասար մեծ հիացմունքով.
—«Նայէ՛ր այս ջրին, ո՜հ, Ասլի-Մէլիք,
Ինչպիսի՜ աղմուկ հանում են ալիք.
Ո՛վ գտնի ակը
Եւ մի տուն շինի՝

*) Սասունի նշանաւոր ձորը։
**) Մուրադ-Չայ։

Այսպէս գաւակը
Ուժեղ կըլինի *)...»

V.

Երկու եղբայրներ առուն բռնելով
Գտան աղբիւրը երկար ման գալով.
Իսկոյն ձգեցին աղբիւրի գլխին
Հսկայական հիմք բերդի ահագին։
Ասլի-Մէլիքը ջանքով անխնայ
Միշտ աշխատում էր շինութեան վրայ,
Իսկ Սանասարը որսի էր գընում,
Երբեմն պարապ՝ եղբօրն էր օգնում։
Ասլի-Մէլիքը վերջին մի օրը

*) Սանասարի նախաղգացածը կատարվում է վերջը. ունենում է մի տղայ «Առիւծաձև Մհերս տ-նունով. սա այնքան ուժեղ և քաջ է լինում, որ տասնմէկ տարի դեռ չլրացած հասակում յաղթում, սպանում է Առիւծ վիշապին և ժողովրդի կեանքը ազատում է սովի ճանկերից։ Զարմանալի է, թէ ինչու պ. Մանդինեանի «Դիւցազնական աշխարհում» ոչ մի յիշատակութիւն չկայ «Առիւծաձևի» մասին, մինչդեռ վարիանտներում և համակրելի է և հիմք ու գոյութիւն ունի Առիւծ-վիշապի հետ եղած այդ արկածը (տես մեր երկրորդ փորձ)։ Ժողովրդականի կողմից այդ արկածում երևակայեցէք ինչպիսի դիցաբանութիւն և ինչպիսի՜ բարոյական մրցական ու

Գնաց և տեսաւ քնած եղբօրը,
Թափել էր գետնին արիւնոտ որսեր.
Նրա վիճակին շատ կարօտասէր
Սիրտը կսկծաց. «Վէր կաց, Սանասար,
Բա՛ւ, թափառական ընկանք սարէսար.
Թողնենք այստեղը անմարդաբնակ,
Ապրել չի լինի երկուսով մենակ.
Գնանք բազմամարդ քաղաքներ մտնենք,
Ցաւող, օգնական մեզ մի «տէր» գտնենք.
Մինչև երբ ուտենք հո՛ւմ, անա՛լի միս,
Շատ չարչարուեցինք այս քանի ամիս.
Դեռ կիսակառոյց բերդի շինութեան
Վրայ թափեցինք քրտինք բաւական.
Ի՞նչ խելքով, սա՛ա, շինում ենք այս բերդ
Եւ փրչացնում խզուր սիրտ ու լերդ.
Եթէ գթառատ Աստուած կամենար՝
Մեր հօր պալատը, ամրոցը կըտար...»

գեղասիրական զգացմունքների և սկզբունքների աղբիւրներ են պատկերացած։ Զգալ ժողովրդի անել դրութիւնը, մոռանալ անձը և գնալ մեն-մենակ, ապրել 11 տարին հասակում, քաղցած Վիշապ-առիւծի դէմ մենամարտելու և յաղթելով ազատել սովի անդութ ճիրաններից մի ժողովրդի ամբողջ կեանք,— յիրաւի ինչ հրաշալի անձնուիրաւթեան և վսեմ զաղափարական յաղթանակող օրինակ։

VI.

Եւ եղբայրները ճանապարհ ընկան,
Բերդը թողեցին ու առաջ եկան
Թագաւորի մօտ Երուսաղէմի.
Խոր գլուխ տալով նրան մի առ մի
Պատմեցին տխուր իրենց դրութիւն՝
Հայցելով գթած, բարի օգնութիւն.
—«Խեղճ ենք,—ասացին երկու եղբայրը,—
Տանից հեռացրեց մեզ անգութ հայրը.
Ճակատագիրը այս է վիճակել.
Այժմ եկել ենք, քո ոտքն ընկել,
Եւ յայտնում ենք քեզ, ով մեծդ արքայ,
Որ եղբայրներին ցաւող տէր չկայ.
Ներքևը դու ես, վերևը Աստուած.
Մեզ պահպանելու եղիր ողորմած.
Դրա փոխարէն կարանք ծառայել,
Աշխարհի առաջ չենք ամաչցնել»։
—«Հայրը որդկերանց ինչ կարհամարհի,
Ո՞ւմ զաւակներն էք և ո՞ր աշխարհի».
Հարցրեց թագաւորն Երուսաղէմի.
—«Մենք զաւակներն ենք Սենեքերիմի,
Որ թագաւոր է նստած Բաղդադում *),

---

*) Թէև ժողովուրդը այստեղ յիշում է Բաղդադի անունը, բայց ժամանակագրական պատմական փաստերի հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ

Հոգով բռնակալ—սարսափ է ազդում
Խեղճ հայոց ազգին և քէնախնդիր
Քանիցըս անգամ Հայաստան երկիր
Արշաւանք գործեց, քանդեց, աւերեց,
Շատերին անմեղ շղթայով գերեց.
Բայց վերջին անգամ, նեղուած հայերից,
Խոստացաւ կուռքին—երբ պատերազմից
Ողջ վերադառնայ—մեզ մատաղ անել,
Սակայն մեր մայրը կուզէր պաշտպանել,
Պատմեց գիշերով տեսած երազը.
—«Թէ կըսիրէք դուք ձեր կեանք, մուրազը՝
Գնացէք, ասաց, ուրիշ աշխարհներ,
Գտէք ձեր գլխին փրկող հնարներ...»
Ահա փախել ենք հեռու վաթանից,
Բռնակալական մեր հոր ճիրանից.
Այժմ խնդրում ենք քեզ մօտ ընդունես
Հայրական սիրով և մեզ պահպանես...»

VII.

Բայց նրանց առաջ արքան թափ տուեց

Բաղդադը Սենեքերիմի ժամանակ գոյութիւն չէ ունեցել, և բացի այդ, Բաղդադի խալիֆաները եղել են միշտ մահմեդական և ոչ թէ կռապաշտ, իսկ Սենեքերիմը, Ասորեստանի այդ թագաւորը իրօք եղել է կռապաշտ։

Ամուր պողպատը ու պատասխանեց.
—«Ցաւում եմ, հօրից վիճակուած որբ էք,
Բայց ձեզ ընդունել չեմ կարող երբէք,
Լսելով ողերքն էք Սենեքերիմի,
Որ մեր ազգի հետ շատ է թշնամի.
Ձեր մեղանչներից հեռու ենք փախչում,
Կենդանիներին չենք էլ ճանաչում.
Գնացէք, տէր չենք ձեր գլխի համար,
Այստեղ գործ չկայ ձեզ վայել յարմար...»

VIII.

Նեղացած սրտով երկու եղբայրը
Գնացին դէպի Մշոյ աշխարհը,
Մուշեղ անունով թագաւորի մօտ.
—«Բաղդից հալածուած, օգնութեան կարօտ՝
Եկել ենք քեզ մօտ մենք աղաչելու,
Որ կամք ունենաս մեզ պաշտպանելու,
Դրա փոխարէն կարանք ծառայել,
Աշխարհի առաջ չենք ամաչցնել»։
Խնդրական ձևով նրանք ասացին
Եւ թագաւորին գլուխ իջեցրին.
—Ո՞ւմ զաւակներն էք և ինչու համար
Եկել էք հեռուից այս օտար աշխարհ.
Ի՞նչ կարիք ունէք, ասացէք, որդի՛ք,
Կըկատարեմ ես ձեր համեստ խնդիրք...»

—«Ո՛չ, պակասութեան մենք չունենք կարիք,
Սափրուած եղանք թողնել հայրենիք,
Որովհետև մեր հայրը բռնակալ
Ուզեց իր պաշտած կուռքին մեզ զոհ տալ
Ու այդ պատճառով, մեր մօր խորհրդով,
Փախանք այս կողմը՝ վտանգն զգալով։
Սենեքերիմ է անունը մեր հօր,
Ինքը կռապաշտ և քաջ թագաւոր...»
—Հերիք, լռեցէք, այս ինչ եմ լսում...
Ձեզ պէս տղերանց շատ եմ ափսոսում,
Որ չէք ծառայիլ ինձ հաւատարիմ,
Երբ որ ձեր հայրն է չար Սենեքերիմ.
Թող հեռու կորչի անզգամ շունը,
Մի՛ յիշէք նրա կեղտոտ անունը.
Նա թշնամի է, չունի խիղճ, ամօթ,
Իր դէշ արարքով աշխարհին ծանօթ...
Ի՞նչ խելք, թշնամուն տանը ընդունե՞մ,
Ի՞նչ է, նրանից անհանգիստ լինե՞մ.
Ո՞ր անմիտ հովիւ կ՚ընդունէ գայլին
Իր շան փոխանակ պահապան հօտին.
Այնտեղ գնացէք – կամենում էք ուր,
Ձեր տամներին չըկայ կերակուր...»
Այսպէս արքան էլ Մշոյ աշխարհի
Կարեց յոյսերը խիղճ եղբայրների...

ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

IX.

Մուշից հեռացան և ճանապարհին
Երկու եղբայրը մտքումը դրին
Երթալ այս անգամ Մալթան արքային.
Սանասարն ասաց Ասլի-Մէլիքին.
—Եղբայր, սևերես ինչ ենք ամաչում,
Մենք այդ հօրից ենք զզուանքով փախչում.
Էլ ինչու համար այդ շան անունը
Մեզ վրայ դրել, քանդում մեր տունը,
Ե՛կ, այսուհետև ում մօտ որ գնանք,
Կամ ով որ հարցնէ՝ այս պատասխան տանք,
Թէ մենք բան չունինք, տուն ու ծնողներ,
Գուցէ մարդիկը մեզ էլ դառնան ատէր...»

X.

Տխուր, յուսահատ ընկան ճանապարհ
Դէպի Ալաթայ հեռաւոր աշխարհ.
Երբ թագաւորը տեսաւ երկուսին
Փառաւոր կերպով կանգնած առաջին՝
Շատ սիրեց նրանց և շատ հաւանեց.
«Ո՞ր աշխարհից էք,քաղցրութեամբ հարցրեց.
—«Բաղդադ քաղաքից,—պատասխանեցին
Եւ խոնարհութեամբ գլուխ տուեցին.

Երկու եկբայրն էլ շատ զարմանալի
Շնորհքով էին և ակնածելի.
Հասակները մեծ, ինչպէս վեհ լեռներ,
Դէմքեր ահարկու և հուժկու կռներ.
Գեղեցիկ տեսքից Մելքօն թագաւոր
Հիացած՝ հարցրեց. «Ի՞նչ է հարկաւոր,
Ասացէք, որդիք, լսել պատրաստ եմ,
Ձեր վիշտ, նեղութիւն ես կըփարատեմ»։
—«Մեզ հարկաւոր չէ հարստութիւն, գանձ,
Այլ կամենում ենք, ոգով աննախանձ,
Ապաստանելով քեզ մօտ ծառայել
Եւ սէր, բարիքներ – մեր գործին վայել—
Ստանալ քեզնից. նեղութեան օգնիլ
Եւ յուսով եղիր—չենք ամաչացնիլ...»
—Ի՞նչ ունէք, չունէք, ասացէք, որդիք,
Ծնող, ազգական կամ տուն, հայրենիք...»
—«Բաղդադ քաղաքն է հայրենիքը մեր,
Ծնողից զրկուած որբեր ենք անտէր,
Աշխարհն է բացօդ մեր օթևանը,
Աստուածն է եղել մեր պահապանը.
Նա վերևիցն է, իսկ չըկայ ներքև
Պայծառացնող մեր խաւար արև.
Անողորմ բաղդից մենք հալածական՝
Ընկանք սար ու ձոր խեղճ թափառական։
Բարերարութեան բաղխեցինք դռներ,

Բայց իզուր անցան մեր բոլոր յոյսեր։
Մարդկանց քարացած և բիրտ զգացմունք
Զըզարթեցրեց մեր ազի արցունք,
Ո՛չ կարեկցութիւն և ո՛չ սփոփանք,
Քանի՞ տառապեց անկայուն մեր կեանք...
Արդ՝ խնդրում ենք քեզ, արքայ բարերար,
Հոգատարութիւն մեր կեանքի համար.
Դու եղիր մեզ հայր և միշտ պահպանի,
Թող քո շուքը մեզ լինի հովանի...»

XI.

—Բաց է ձեր առաջ ամբողջ Խլաթը,—
Իսկոյն արքայի շարժուեցաւ գուրթը.—
Իմ քաղաքի մէջ ազատ ապրեցէք,
Եւ նեղ ժամերին դուք ինձ օգնեցէք»։
Ապա հրամայեց իր ծառաներին.
—«Տարէք մի լաւ տեղ այս եղբայրներին,
Թող ջոկ սենեակում միասին ապրեն,
Այնտեղ իմ հաշուով հաց տան, կերակրեն...»
Երկու եղբայրը հիւրընկալուեցին
Եւ թագաւորից անչափ սիրուեցին.
Ասլի-Մելիքը եղաւ ղահուէչի *),
Իսկ Սանասարը կարգուեց չիբուխչի *)։

*) Սուրճ տուող։
**) Ծխաքարշ տուող։

XII.

—«Տարին լրացաւ,—վէզիրը մի օր
Ասաց Մելքօնին,—լսիր, թագաւոր,
Մեզ մօտ ապրում են դեռ այդ տղաներ,
Բայց առանց վարձի և ձրիակերներ...
Ի՞նչ օգուտ ունես, ես չեմ հասկանում,
Որ հաց ես տալիս, իզուր պահպանում,
Ինչո՞ւ օտարը մեր մէջը ապրի,
Մեր «լաւն ու վատը» աչքովը տեսնի...»
—Բարի խորհրդիդ լսելուն հազիր՝ *)
Ասա՛ ինչ անենք, պատուական վէզիր...»
—«Այդ տղաներին մի օր կրկանչես
Փորձելու համար, որ դու ճանաչես
Ի՞նչ հունար ունին կամ թէ քաջութիւն,
Արդեօք նեղ օրում կանե՞ն օգնութիւն...»
Արքան հաւանեց վէզիրի խօսքին
Եւ հրամայեց կանչել տղերքին.
Տղերքը եկան արքունի պալատ,
Մելքօնի առաջ կանգնեցին ադամ.
—«Ի՞նչ կամք, թագաւոր, պատրաստ ենք լսել».
—«Ոչինչ, ձեզ միայն այն կուզեմ ասել,
Վաղը կլինի մեծ ճակատամարտ,
Դուք կերթաք կռուի—ինչպէս տղամարդ...»

*) Պատրաստ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայկական Գրադարան
7/31 22
ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1001
Ա 197

XIII. Մյասնի Յանի անվան

Վաղը լուսացաւ, երկու եղբայրը
Առան գուրզերը, հեծան ձիերը,
Դուրս եկան մէյդան ջիրիդ խաղալով,
Եկաւ արքան էլ իր մեծ ղօշունով։ *)
—«Կռուելու կերպը թող լինի այսպէս՝
Ասլի-Մէլիքը, վէզիրը և ես.
Իսկ դու, Սանասար, մի կողմի վրայ
Վերցրու ղօշունը, ինչ որ այստեղ կայ»։
—Ո՛չ, ո՛չ, թագաւոր,—ասաց Սանասար,—
Դուք մեղք կլինէք և անհաւասար»։
—«Հապա ինչ կուզես,—յառեց թագաւոր,—
Որ գործը լինի խղճմտանքաւոր»։
—«Ես ու եղբայրս մի կողմը լինենք,
Թող ղօշունիդ հետ երկուսով կռուենք»։
—Թող այդպէս լինի,—արքան յօժարուեց.
Եւ կարճ միջոցում կռիւն սկսուեց.
Կատաղի՛ կռիւ, սաստիկ եղաւ ջարդ,
Այնքան զօրքերից չազատուեց մէկ մարդ։
Երբ թագաւորը տեսաւ զօրք չկայ,
Փրփրեց, բարկացաւ վէզիրի վրայ.
—«Բո տունը քանդուի, այս ի՞նչ արեցիր,

*) Զօրքով։

Ամբողջ ղօշունը զուր կոտորեցիր.
Դրանք իսկապէս եղել են մարդիկ,
Իսկ մենք թուլամորթ և վախկոտ կնիկ...

Հետևեալ օրը եղաւ հրաման
Պատժել վէզիրին—դէպի՛ կախաղան։

XIV.

Այդ քաջութիւնով շատ հռչակուեցին
Երկու եղբայրը, բայց չընացին
Երկար ժամանակ Ալաթ աշխարհում,
Ուրիշ ծրագիր ունէին մտքում.
—«Ե՞րբ պէտք է հասնենք մեր նպատակին,
Սանասարն ասաց Ասլի-Մէլիքին.
Զուր ծառայում ենք տէրութեան օտար,
Բայց մնաց շէնքը մեր կիսակատար
Աղբիւրի գլխին, առանց հետևանք,
Ինչու՞ զուր անցնի այնքան աշխատանք.
Տէր է հարկաւոր, որ տայ ժողովուրդ,
Ուրեմն, եղբայր, լսի՛ր իմ խորհուրդ.
Ո՛չ դու առաւօտ սուրճ կըմատուցես,
Ո՛չ էլ ծխաքարշ կըպատրաստեմ ես.
Հաստատ պայմանին՝ Մելքոն արքային
Վաղը չ՛երևանք մենք ամենևին.

Այս բանից դրդուած նա կըբարկանայ.
Պատճառի համար կըտեղեկանայ.
Իսկ մենք չըվախենք կանչած ժամանակ,
Այլ բացատրենք մեր վեհ նպատակ...

Եւ եղբայրները պայման կապեցին՝
Զերթալ արքային համաձայնուեցին։

XV.

Երբ թագաւորը տեսաւ առաւօտ
Երկու եղբայրը չեկան իրեն մօտ,
Կանչեց ու ասաց—«Ի՞նչ էք մտածում,
Ինչու համար էք հակակրանք տածում
Դէպի իմ անձը, որ ձեզ սիրում է.
Հօրից աւելի խնամք տանում է.
Գուցէ կարծում էք, թէ նեղացած եմ,
Իբր ձեզանից վրէժ կըլուծեմ,
Որ կոտորեցիք այնքան զօրք անբաւ,
Վէզիրն արդէն պատիժն ստացաւ.
Ընդհակառակը ես շատ ուրախ եմ,
Որ ձեր շնորհիւ ուրշից չըվախեմ,
Այլ թէ վախենայ ինձնից թշնամին,
Թեւ թիկունք լինէք նեղութեան ժամին.
Ուրեմն, այսօր ինչու՞ չէք եկել,

Ինձ համար ծխաքարշ և սուրճ պատրաստել.
Հայր չունէք, ասեմ, մտածում լինէք,
Մայր չունէք, ասեմ, կարօտը քաշէք.
Չէ՞ որ առաջուց հարցրի «ունէք ինչ»,
Պատասխանեցիք «բան չունենք ոչինչ»,
Էլ ինչո՞ւ համար տխուր էք, որդիք,
Բացատրեցէք ճշմարիտ ձեր միտք...»

XVI.

— «Ճշմարիտ է, որ չունինք հայր ու մայր,
Ո՛չ տուն, ազգական, ո՛չ ուրիշ եղբայր,
Բայց համակրանքն Ձերդ արքայի,
Բայց կուզենք յայտնել—մի տեղ ամայի
Շէնք ենք սկսել բերդի անառիկ
Եւ վրէն թափել աշխատանք, քրտինք.
Բայց կիսատ թողել, այս կողմը եկել.
Այս բանը քեզնից չենք ուզում ծածկել.
Ուստի խնդրում ենք լսես մեր խորհուրդ,
Օգնելու համար մեզ տաս ժողովուրդ...»
Եւ սկսեցին պատմել միասին
Բերդի շինութեան, աղբիւրի մասին։
Ողորմած արքան խորհուրդը լսեց,
Նրանց քառասուն տուն յանձնարարեց
Եւ ասաց. «Որդի՛ք, առէք գնացէք,
Ձեր կիսակատար բերդը շինեցէք...»

XVII.

Միւս առաւօտը ճանապարհուեցին,
Այն աղբիւրի մօտ իջևանեցին.
Սանասարն ասաց Ասլի-Մէլիքին.
—«Արդեօք ինչ կ՛ասես, եղբայր, այս մտքին.
Առաջ սկսենք շինութիւն բերդի,
Թէ՞ կացարաններ խեղճ ժողովրդի»։
Ասլի-Մէլիքը տուեց պատասխան.
—«Աղքատ ժողովուրդ առանց բնակարան
Ի՞նչպէս դիմանայ արեգական տակ.
Նախ պէտք է նրա բարեկենք վիճակ»։
Եւ սկսեցին շինութիւնները
Այնպէս եռանդով քաջ եղբայրները,
Որ տասը տան տեղ փորում, պատրաստում
Եւ մի օրուայ մէջ տասը տուն շինում.
Պարիսպները պինդ քարով, աղիւսով,
Տները շինում իրենք երկուսով.
Իսկ ժողովուրդը փայտեր էր բերում
Եւ ցեխ կրելու պաշտօն կատարում.
Այսպէս չորս օրում քառասնաչափ տուն
Աւարտեցին շուտ, արին բնակութիւն.
Ապա կիսատը բերդի սկսան,
Եւ եղբայրները քաջ էին այնքան,

Որ քարէ սեան տեղ քար սիւն զարկեցին,
Մի տարի միջոց—բերդն աւարտեցին...

XVIII.

Ասլի-Մէլիքը վերկացաւ մի օր
Գնաց Մէլքոնին. «Գոհ ենք, թագաւոր,
Որ դու լսելով մեր բարի խորհուրդ՝
Տուիր մեր ձեռքը օգնող ժողովուրդ.
Մենք քո որդիքն ենք. բերդը շինել ենք,
Թեզ մօտ խնդրելու ահա եկել ենք,
Որ բարեհաճես մեզ հետ այնտեղ գաս
Եւ գեղեցկաշէն բերդին անուն տաս...»
—«Լաւ է, սիրելիք, ինձ չէք մոռացել
Եւ լաւութիւնը իզուր չէ անցել».
Համբուրեց Մելքոն Ասլի-Մէլիքին
Եւ որդեգրեց, աղջիկն տուեց կին։

XIX.

Տղան ու աղջիկն երբ պսակուեցին՝
Թագաւորի հետ ճանապարհուեցին
Դէպի աղբիւրը փառաւոր շուքով,
Հեծած ձիերը և անթիւ զօրքով։
Խրինջում էին ձիերը թամբած,
Գնում յեռվից ժողովուրդ խմբած

Եւ տանում էին լաւ զարդեր պէս-պէս՝
Այնտեղ անելու փառաւոր հանդէս։
Ասլի-Մէլիքը առաջնորդելով
Ասաց արքային բերդը ցոյց տալով.
—«Ահա բերդը, տէր, նայիր շինուածքին
Եւ գին դնելով մեր աշխատանքին՝
Օրհնիր դու նրան և դիր մի անուն».
Արքան զարմացաւ տեսնելով կանգուն
Բերդի ամրութիւն մի հսկայական,
Թաշած կամարով մեծ ու յաղթական.
Ուրախութիւնից խսկոյն հրամայեց,
Կարմիր դրօշներ օդում ծածանուեց.
Զօրքը հնչեց փող և ժողովուրդը
Մտաւ գեղաշուք հանդիսով բերդը։
—«Թող Աստուած օրհնէ ձեր ճիգն ու վաստակ,
Զուր չէք անցկացրել ձեր կեանք, ժամանակ.
Շատ ապրիք, որդիք, խելօք վարպետ էք,
Լաւ ձեռքեր ունէք, գործը լաւ գիտէք.
Առէք օրհնանքս իմ անկեղծ սրտից.
Ես շատ հիացայ այս սիրուն բերդից.
Եւ որովհետև անուն չէք դրել
Ու, հրաշք,... քարէ սեան դուք սիւն էք տուել՝
Դրա անունը թող կոչուի «Սեան սիւն...».
Այն օրից մնաց անունը Սասուն...

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

XX.

Այդ դէպքից յետոյ անցան տարիներ.
Ասլի-Մէլիքին եղան զաւակներ.
Մէկի անունն էր Ճնճղատիրոքիկ,
Եղբայրների մէջ ամենապստիկ.
Անդրանիկ որդին «վախկոտ» Ցանվէզի *).
Երկուսն էլ անպէտք, միշտ խաղում վէգի։
Իսկ Խոր Դուսանը շատ լաւ էր երգում
Եւ ողջ աշխարհը խաղով գրաւում.
Զէնով Սարգիսը ձայն ունէր ահեղ,
Որ արձագանք էր լինում ամեն տեղ.
Դաւիթ **) անունով մի տղայ էլ կար,
Բայց թոյլ կազմուածքով, հիւանդ, ցաւագար...

XXI.

Ինքն Ասլի-Մէլիք շատ կարիճ մարդ էր,
Չին ու Չանավար ոյժով կը Չարդէր.
Անպաղթելի էր կռվում կատաղի,

*) Սրա անունը ժողովրդական վարիանտներում մնացել է մինչև այժմ մութ և անյայտ. չըպէտք է շփոթել իսկական Սասունցի Դաւթի հետ։

**) Սրան ժողովուրդը «Ցուան—Վէգօ» անունն է տալիս վախկոտ լինելու պատճառով։

Թշնամիներին դարձնում էր գերի։
Ամեն օր բերդից՝ նժոյգը հեծած՝
Նա դուրս էր գալիս զբրահաւորուած.
Եւ շատ կողմերում տարածել էր վախ,
Մշոյ սարերը զբրաւել անկախ...
Մի օր էլ հասաւ Մուսուլ աշխարհին,
Այն էլ զբրաւեց և թագաւորին
Սպանեց, առաւ կինը ամուսին
Եւ կենակցելով տպրեց միասին.
Ինքը Մուսուլում նստեց թագաւոր.
Եւ ժողովրդասէր և շատ բաղդաւոր.
Կինն էլ գեղեցիկ, շատ բարեսիրտ էր
Եւ առաքինի, հանդարտ խղճի տէր.
Իսլիմ խանում *) էր այդ կնոջ անուն,

*) Սասմայ ծռերում Բ. վարիանտի մէջ այս կինը դուրս բերուած է իբր Առիւծաձև Մհերի կին, որի և իբր աղջկութեամբ ամեն ինչ կտակում է նա իր խորթ որդի Մսլա-Մէլիքին (?). սա սխալէ։ Վարիանտիս երկու հայ Մշեցի հմուտ աշուղների և բուն ժողովրդի ճշգրիտ պատմածների հիման վրայ և մեր երկարամեայ ժողովրդական նիւթերի բաղմաճիւղ աղբիւրների վերաբերեալ ուսումնասիրած փորձերի շնորհիւ՝ եկել ենք այն իրական եզրակացութեան, որ Իսլիմ խանումը եղել է Ասլի-Մէլիքի երկրորդ կինը, իսկ Մսլա-Մէլիքը նրա խորթ որդին։ Վերջինս երբ հասակն առնում է և տեղեկանում, որ

Որից ծնուեցաւ մի տղայ *) սիրուն...

XXII.

Իսկ Սանասարը, իբրև սիրասուն
Զաւակ բնութեան, նստած էր Սասուն.
Անչափ սիրում էր իր ժողովրդին՝
Լսող հնազանդ իր ազատ կամքին.
Բայց հոր կուռքերը անհանգստացնում
Եւ չէին թողնում մնալ Սասունում,
Ուստի մըտածեց ընկնել ճանապարհ,
Դէպի Բազդադը—հայրենի աշխարհ։
—«Քանի՛ անցկացնեմ անքուն դիշերներ,
Սիրտս տրորեն հոգոց արարքներ.
Կամ պէտք է զոհուեմ չարաչար կուռքին,
Կամ վերջ տամ հոգոց անիրաւ կեանքին....»
Ասաց ու գնաց։—Հայրը նըկատեց
Եւ Սանասարին իսկոյն ճանաչեց.
—«Ի՛նչքան մեծ է, կո՛ւռք, քո զօրութիւնը,

իր հարազատ հոր սպանողը Ասլի-Մէլիքն է եղել, մի օր խաբէութեամբ տանում է որսի, սպանում նրան և ինքը լինում Մսրա-Մէլիք։

*) Որովհետև հոր անունը Ասլի-Մէլիք էր, որդու անունը դրին Մսրա-Մէլիք. տես Ս. Մանդինեանի Դիւցազնական աշխարհ և մեր «Սասունցի Դաւիթ»։

Որ Սանասարի կորելով քունը՝
Քաշեցիր, բերիր մատաղ կամաւոր,
Գիտեմ, միւսին էլ կըբերես մի օր...»

XXIII.

Մայրն Աստուածապաշտ*), ընութեամբ բարի,
Տեսնելով վտանգն իր Սանասարի՝
Սկսեց ախրել և շատ արտասուել,
Փրկութեան համար մարդուն աղաչել.
Բայց Սենեքերիմ, սիրտը քարացած,
Առաւ սուրն ու թուր, սաստիկ կատաղած
Կանչեց. «Եկ, որդի, գնանք տեսութիւն,
Տուր հզօր կուռքին երկրպագութիւն.
Թող պէտք է զոհեմ, ուր ես թափառել,
Խոստումս անկեղծ կ'ուզեմ կատարել»։
Սանասարն ասաց. «Իմ հայր թագաւոր,
Հաւատա՛, կուռքդ շատ է զօրաւոր,
Գիշերն այնտեղ չըթողեց խաղաղ,
Միւս եղբօրս էլ կըբերէ մատաղ»։

*) Ասլի-Մէլիքը և Սանասարը նոյնպէս եղել են Աստուածապաշտ, այնպես որ իրենց մօր հետ ամբողջ հոգու զօրութեամբ ատելիս են եղել Սենեքերիմին՝ նրա մոլեռանդ կռապաշտութեան և անխիղճ բռնակալութեան համար։

Ապա երկուսով մտան կառուն.
—«Ո՛րդի, տուր կուռքին երկրպագութիւն»։
—«Ո՛չ, լսիր, հայրիկ, դեռ փոքրիկ էինք,
Երբ մենք Բաղդադից հեռացել էինք,
Ուստի չըգիտենք կուռքիդ զօրութիւն,
Առաջ տուր ինքդ երկրպագութիւն,
Որ օրինակիդ ես էլ հետևեմ,
Ես էլ խոնարհուիմ ու երկրպագեմ...»
—«Տես, որդեակ, այսպէս—հայրը խոնարհուեց
Երկիւղածութեամբ և երկրպագեց։
—«Է՞յ, մեռնեմ կուռքի կախարդ զօրութեան,
Ցնցեց մարմնս, արիւնս զոյութեան.
Աչքերս մթնեց, երբ խոնարհուեցիր,
Զբտեսայ, հայրիկ, դու ի՞նչ արեցիր.
Ե՛կ, մի անգամ էլ խոնարհութիւն տուր,
Ես էլ կըլինեմ կուռքին անձնատուր» *)։
Երբ հայրը ծընկչոդ դարձեալ խոնարհուեց,
Քաջ Սանասարը բարձրաձայն գոչեց.
«Եա հայն ու դինի,
Տէրը կենդանի».
Եւ մի գուրզ իջաւ
Սենեքերիմին

*) Ժողովրդի պատմելով՝ Սանասարը առաջին անգամին յարմարութիւն չէ գտնում Սենեքերիմին հարուածելու կամ սպանելու...

Իսկոյն ցած տարաւ
Եօթն գազ գետին...

XXIV.

Շուտով կառուն մտաւ Սանասար,
Զարդեց կուռքերը գետնին հաւասար,
Առաւ արծաթներ, բոլոր զարդարանք,
Իբր ազատութեան թանկագին փրկանք.
Յանձնեց իր մօրը. «Մամօ *) Ջան, վեր առ,
Շինել տուր դրանցից զարդեր քեզ համար.
Այլևս չըկայ այն լիրը գաղանը,
Որ քարքանդ արեց ողջ Հայաստանը.
Նա, որ շատերին թշուառացրեց,
Հայ ազգի թիւը նուազեցրեց.
Նա, որ արիւնով ներկեց հայ դաշտեր,
Պատեց թախիծով մարդկային սրտեր.
Ո՛չ մօրկան լացը, ոչ մանկան ճիչը
Զ՛արթնացրին նրա քարացած խիղճը.
Է՜հ, որ մէկն ասեմ, նրա ոճիրներ
Լի են աշխարհիս ամեն անկիւններ.
Վերջապէս չըկայ այն բռնաւորը,
Որ մինչև անգամ որդկերանց օրը
Ուզում էր խաբել, կուռքին զոհելով,

*) Մայրիկ։

Բայց ինքն եղաւ զոհ իր որդու ձեռքով,
Փոյթ չէ. հայրասպան թող ես հռչակուեմ,
Բայց խղճի առաջ ես շատ հանգիստ եմ,
Որ կատարել եմ մի գործ սրբազան,
Հեռացընելով երկրից մի գազան.
Գազա՛ն, որ շատից արցունք է քամել,
Շատին գիշախանձ սրերով տանջել,
Ահա թէ ինչու հօրս սպանեցի,
Որով և շատի կեանքն ազատեցի.
Թող չընի մէկը անգութ, մնասակար,
Շատերի հանգիստ ապրելու համար...

XXV.

Մայրը համբուրեց որդու ճակատը.
—«Կեցցէ իմ որդին, իմ Սանասարը,
Որ մեհեանները կուռքերի փշրեց,
Բռնակալ հօրից «վրէժը» լուծեց...»
Ապա ձեռքերը երկինք տարածած
Աղօթեց մայրը... «Ստեղծող Աստուած
Երկնի ու երկրի, զոհանամ Քեզնից,
Որ ազատեցիր այս քարքարոսից.
Թո՛ղ կոտաշատութեան գարշանքը կորչի,
Աստուած՝ պաշտութեան օրէնք ճանաչուի...»

Սանասարը հօր գահը բարձրացաւ,
Մօր առաջարկով վերջն ամուսնացաւ.
Ունեցաւ երկու ուժեղ զաւակներ,
Մին Զէնով-Յովհան, իսկ միւսը՝ Մհեր.
Զէնով-Յովհանը *) ունէր բարձր ձայն,
Որից սարսում էր բնութիւն համայն.
Եօթը գոմշի հաստ կաշին արևում
Զորացընում էր, մէջը փաթաթվում,
Որ չրտռաքուի ահեղ գոռալիս,
Մարդ զարզանդում **) էր ձայնը լսելիս...

Քաջ էր Մհերը ***), տեսքով ահարկու,
Այժ ունէր անյաղթ, կռները հուժկու.

*) «Սասմայ ծռերում» (իսկապէս գնահատելի աշխատութիւն է արժ. Գարեգին Սարկաւագի կողմից) գրի առած Ա. վարիանտով թէ Զէնով.-Յովհանը եղել է Մհերի երրորդ որդին,—սխալ պէտք է համարել, ուղիղն է Բ. վարիանտը, որ Զէնով-Յովհանը եղել է Մհերի եղբայրը, Դաւթի քեռին և Խլաթայ տէրը: Շատ գրուածներում Սասունցի պահլաւանների ցեղական ճիւղաւորութիւնները ներկայացրուած են բազմատեսակ ու հակասական, որ կարօտ են լուսաբանութեան:

**) Սարսափում:

***) Պարապում էր որսորդութեամբ և աշխարհակալութեամբ:

Գեռ նա տասնումէկ տարէն հասակում
Սասունը տանող լեռնուղիներում
Սպանեց քաղցած վիշապ Առիծին,
Որ «սով» էր ձգել ամբողջ Սասունին.
Եւ հսկայական այդ մեծ արկածով
Նա «Առիւծաձև»*) կոչուեց անունով։

Մհերից եղաւ Սասունցի Դաւիթ,
Մի շնորհալի պահլաւան իգիթ.
Այն դիւցազնական պարծանքն աշխարհի,
Որ չըվախելով սարսափից մահի,
Կռիւ է մղում կըռիւ անդադրում
Կեանքի ալեծուփ փոթորիկներում.
Եւ կրծքից արեան գետեր են վազում.
Այսօր էլ ազատ կեանքի երազում...

---

*) Երեխ այս անունը դրել են Դաւթի որդի Մհերի պստիկ մականունից զանազանուելու համար։

Վ. Ե Ր Զ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿՈՄԻՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Школьная Библиотека
7/31 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ՀՀ Ազգային գրադարան
NL0321790

231